

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՍՈՒԼ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Մեր մամուլի մէջ տառեժին տեղ են
զբանում Հայրենակցական միութիւն-
ների հրատարակած պարբերականները:

Հայրենակցական միութիւնները օգ -
տակա՞ր են: Պի՞ոտք է քաջալերւին, թէ
ոչ: Այս մասին տարբեր կարծիքներ
կան: ոմանց համար «հայրենակցական»-
ները ազգը պառակտող, ազգային ուժե-
րը ցան ու ցիր անող, վճառակար կամ,
լաւագոյն դեպքում, մեծ ոյժ կլանող,
բայց ֆիշ արդիւնք տուող անօգուտ կազ-
մակերպութիւններ են: Ուրիշներ, ընդ-
հակառակը, դրական զնահատութիւն են
տալիս: Մեզ բւում է, որ նիշտը այն
է, որ կան ե՛ւ օգտակար «հայրենակցա-
կան»-ներ, ե՛ւ վճառակար: Իրատեսու-
թեամբ մօտենալով խնդրին՝ պէտք է
առնենք լաւը եւ յետ մղենք վասր: Հայ-
րենակցական միութիւնները այսօր
կեանքի երեւոյք են, եւ պէտք է զի-
տենանի այդ փաստը օգտագործել լա-
ւագոյնս:

Հայրենակցական միութիւնների գնահատելի կողմէ այն է, որ նրանք, համեմատաբար, հեշտուրեամբ միացնում են միեւնոյն վայրի հայրենակիցներին, կապում են նրանց ծննդավայրի հետ, եւ միմեանց, կազմակերպում են փոխադարձ օգնութիւն, աշխատում են նոր սերությը դաստիարակելի հայ լեզով ու հայ ոգիով, մի խօսելով՝ մեր տարագրային ծանր պայմաններում ճատում են օգտակար լինել միմեանց եւ հայրենիքն: Մեկնելով մասմաւորից՝ հայրենակցականները ծառայում են ընդհանուրին: համախմբւելով մի վայրի շուրջ՝ գործում են Հայաստանի բարգաւահանական:

Շատ է «հայրենակցական» ներքի քիւլը, մասնաւորապէս Ամերիկայում, եւ գործում են նրանք զանազան անուններով: Կարենցիներ, տարօն - ուուրուբերանցիներ, վասպուրականցիներ, մարաշցիներ, այնքանցիներ, սրբազնցիներ, խարքերցիներ, մալաքիացիներ եւ շատ ուրիշներ կազմակերպած են գործօն միւռիւնների մէջ եւ աշխառու մաս են կազմում հայ իրականութեան:

Միաւրիմներից ումանք ուսնեն եւ ի-
րենց պարբերական հրատարակութիւն-
ները՝ իրենց «օրգան»-ները։ Հետաքը-
բական գրականուրիւն է «հայրենակ-
ցական» պարբերաքերքի մշակած
գրականուրիւնը։ Երանի քէ ձեռնեաս
մէկը այդ նիւրը յասուկ ուսումնասի-
րուրեան առարկայ դարձնէր։

«Հայրենակցական» պարբերականների
մէջ, կարելի է ասել, ամենուն աշխա-
ռու տեղը բռնում է Մալթիոյ Կրթա-
սիրաց Ընկերութեան «Պապ - Ռւխտի»
պարբերաթերթը: Մալարիոյ Կրթասի-
րաց Ընկերութիւնը — «հարազատ»-ը —
մօտ 35 տարւայ կեանք ունի և այսօր
իր մէջ համախմբում է 13 մասնաճիւ-
ղեր աւելի քան 500 երկսեռ անդամնե-
րով: «Պապ - Ռւխտի»-ն հիմնած է
չորս տարի առաջ և լոյս է տևելում
Քիմիկանում երեք ամիսը մի անգամ,
ամերիկան կանոնադրութեամբ, հա-
մախմբելով իր շարքը ի սփրուս աշ-
խարի տարտիւած մալարիացիները :
Խմբարական - վարչական գործերը
ձեռնեասուր եամբ վարում է Ընկերու-
թեան վարչութեան ֆարուղար Գ. Թո-
փալեանը: Ընդհանուր սպառումը շուրջ
300 - 350 օրինակի է հասնում:

«Պապ - Ռւյստի»-ն ապրում եւ ապրեցնում է միայն Մալաքիայով: Նրա աշխատակիցները մալաքիացի են: Բռվանդակութիւնը՝ Մալաքիան ու Մալաքիացները՝ իրենց ամցեալով ու ներկայով: Ամեն էջից յուզիչ սէր ու նւիրում է բուրում դէպի «անցեալ» ծննդավայրը եւ այստեղ կեսմէ առած դէմքերը՝ «մեր նահատակները» ու «հերոսները», «մեր Պապ - Ռւյստի»-ն ու Սուրբ Փրկիչը, հայրենի օդն ու ջուրը, լեռն ու գետը» ...

Մէջ ընդ մէջ քերը տալիս է եւ պատմական արժեքաւոր նիւթեր, ինչպէս է Գ. Գալստեանի «Խնչ տեսայ 1914-1927-ին», որ Գ. Մելիտիննեցիի «Նախնիքը» շահեկան հասորից յետոյ, վառ գոյներով նկարագրում է Մալաքիայի հայութեան բնաշնչումը՝ «մեր պաշտելի ծննդավայրի աւերումը»:

«Պապ - Ռւյստի» պարունակում է եւ գրական կտորներ ու ռոտանաւորներ: Ռւնի եւ տեղեկատու բաժին, ուր լուրեր են հաղորդում մալաքիացների կեանքից - ծնունդ, ամուսնութիւն, մահ, զանազան տօներ, հանդէսներ, մասնահիւղերի գործունեութիւնը եւ այլն:

«Յիլատէլֆիաքնակ զնիարերող հայրենակից մը» այս տարի քանի տոլուար է տրամադրել «Պապ - Ռւյստի»-ի խրմագորութեան «Քրիստու նւէր տալու համար այն մալաքիացի գրադին, որ «Պապ - Ռւյստի»-ին մէջ լաւագոյն նըկարագրութիւնը կընէ մեր ծննդավայրի մէջ զանուող վերի եւ վարի Պապ - Ռւյստիններուն»...

Տիպար «հայրենակցական» քերը է «Պապ - Ռւյստի»-ն, որ առանց մնձ յաւակնութիւնների, համեստ ու լուրջ՝ օգտակար գործ է կատարում՝ զանդալով հայ պահել ու վաղայ Հայաստանի համար փրկել մալաքիացի հայրենակիցները:

Բռորութին տարբեր բնոյք ունի Տարօն - Տուրութեան Հայրենակց. Միւթեան հրատարակածը — «Տարօնի

Արծիւ »՝ «օրգան տարօնական ոգիի»:

Ծաւալուն ու համակրելի կազմակերպութիւն է Տարօն - Տուրութեան Հայրենութիւնը, որի կենտրոն վարչութիւնն էլ գտնուում է Ամերիկայում: Ասրիլից սկսած լոյս է տեսնում նրա օրգանը, որ խմբագրում ու տպում է Սովիայում, 32 էջնոց ամսական տետրակների ձեւով: «Հայրենակցական» շարժման հետ, ըստ էռութեան, կապ չունեցալ գործ է այս, այլ զատ ժաղաքական ձևոնարկ: Եւ կենտրոն վարչութեան «պաշտօնական յայտարարութեան» մէջ (№ 1) այսպէս էլ բացատրած է: «Տ. - Տ. Հ. Միութիւնը սպիռական Հայրենակցական Միութիւն մը չէ: Թէի ան կը ական, բարեսիրական եւ մշակութային գործեր կը կատարէ իր բնագաւառի հայ ժողովութիւն նկատմամբ, ինչ որ կընեն միւս հայրենակցականները, բայց առոնք Միութիւնս զոյութեան կոչող ազդակներ չեն եղած»:

Որո՞նք են հապա այդ ազդակները: — Զուտ ժաղաքական: «Ժաղաքական բընոյք կրող հայրենասիրական կազմակերպութիւն մը՝ ին ասպետական ուխտերու տիպարով»: «Մենք կը հաւատանաք որ տարօնականութեան ոգին Փրկարար դէր պիսի կատարէ հայութիւնը իր ներկայ անկերպարան վիճակէն դուրս քերիւն եւ իր պատմական Հայրենիքին տէր դարձնելու համար»: Այսինքն՝ զուտ ժաղաքական գործ: Եւ քէիւ կենտրոն վարչութիւնը վնասկանապէս յայտարարում է, թէ՝ «կուսակցութիւն չինք եւ չպիտի ալ ըլլանք», բայց իրապէս բընուած նամբան անխուսափելիօրէն տանում է դէպի ժաղաքականութիւն եւ կուսակցութիւն: Տ. - Տ. Հ. Միութիւնը, անշուշտ, առանց այդ մասին մտածելու ելել է նոր ժաղաքական կազմակերպութիւն ստեղծելու:

«Տարօնի Արծիւ»-ի երկրորդ համարում այս խնդիրը արդէն աւելի որոշ է դրաւծ: «Կայծակը ժայթքեց, բայց խոռոշ անցաւ և ձախողեցաւ հայ յեղա-

փոխութիւնը։ Եկաւ տարագրութիւնը — սպասիչ մղաձաւանց։ Բայց գործեց նաև ոգիի դիմամիկան — ցավի հետ խորացաւ իմացական տառապանքը, զգացումներու փոքր որիկը։ Հայ յեղափոխութեան ողբերգութենէն յզուրիւն ստացաւ հզգօրանէին նորատենչութիւնը — տարօնականութիւնը։ Եւ աւելի որոշ։ «Մամիկոնեան ոգիի պաշտամունքն ծնունդ առաւ հայ յեղափոխութիւնը, վերջինեն՝ տարօնականութիւնը։ Այսինքն՝ հայ յեղափոխութեան տեղը բռնիւր է տարօնականութիւնը։

Խսկ ի՞նչ է «տարօնականութիւն» ասածը։ «Յեղի ոգիի յատկութիւն է տարօնականութիւնը — ուազմախանդ մշակոյք եւ կուլտուրաստեղծ հերոսականութիւն, հոգեւոր Մեսրոպականութիւն եւ սրտաւոր Վարդանականութիւն՝ միաժամանակ»։

Խակ ու տհաս մտեր կարող են յափշտակել նման դաստրկարանութիւններով, բայց Տ. - Տ. Հայր. Միուրիւնը ի՞նչ կազ ունի դրամց հետ, որ բաղկացած է տարբեր բաղական ըմբռնումների տէր անհատներից եւ անհրաժեշտորեն պատահական է ու անկուսակցական, իմչդէ՞ս կարող է լինել «Հայրենակցական» ու պահել իր միու-

թիւնը՝ դառնալով բաղական կազմակերպութիւն։ Եւ չենք խօսում այն մասին, որ «Տարօնի Արծիւ»-ը, իբրև բաղական մի նոր կազմակերպութեան բերան, անխուսափելիօրէն բախման մէջ պիտի մտնէ ուրիշ բաղական կազմակերպութիւնների հետ, եւ հետեւանգը...

Անշուշտ, տարօնցի մեր հայրենականցները բիւրիմացուրեան մէջ են. նրանք ծառերի յետեւից չեն տեսնում անտառը։ Նլացած «տարօնականութիւն», «Մամիկոնեան», «Վարդանանք» բառերից, չեն նկատում, թէ ի՞նչ վտանգաւոր մանապարի վրա են կանգնել։ Խախ՝ տարօնականութիւնը, երէ այդպիսին զոյուրիւն ունի, չի կարող փոխարինել հայուրիւնը, որովհետեւ հայուրիւնը ամբողջուրիւն է, խսկ տարօնականութիւնը՝ մասնիկ։ Երկրորդ՝ հայրենակցականը դարձնելով բաղական կազմակերպութիւն՝ հէնց տարօնցիներին իրենի կը պատակուին ու կը բայքային։ Հայրենակը տարօնցիները, որ միշտ եղել են ընդհանուր հայկական շարժման առաջին շարժերում, չե՞ն կարող, չպէ՞տ է այդպիսի սխալ ու վրասակար գործ կատարեն։ Հայրենակցականը հայրենակցական Միուրիւն է — աւելին՝ ի չարէ է։

ԳՐԱԿԱՆ ԲԵՐՔԸ

Երէ Հայաստանում գրական ստեղծագործութիւնը համարեա բոլորովին կանգ է առել եւ նոր երկեր լոյս չեն տեսնում, արտասահմանում, հակառակ ներքական չափից աւելի աննպաստ պայմանների, զրական հրապարակը հարստանում է նորանոր եւ արժեքաւոր հատորներով։ զրերէ իրար յետնից ստացանք Բ. Նուրիկեանի պատմածքների զեղեցիկ «Այգեկուրք»-ը (Նիւ - Եսրք), Ա. Գլուհեանի «Երգեր ուրացման եւ զզջումի» ուստաւորները (Նիւ Եսրք), շատ խոսու-

մնալից երիտասարդ բանաստեղծ Մ. Իշխանի երկրորդ գիրքը՝ «Կրակը» (Բէյրութ), մեր միակ երգիծագիր Ն. Պէտրոսյանի «Ծաղրանկարներ»-ը (Փարիզ) եւ, վերջապէս, Ա. Հարոն Տատուրեանի փառաւոր «Մազաղաքներ»-ը։ Բէյրութի Հայ ճեմարանի Շրջ. Միուրիւնը լոյս է ընծայել «Պատմւածքներու ժողովածու»-ի երկրորդ գիրք։ Փարիզում լոյս տեսան Ականել Բակունցի «Պատմւածքներ»-ը՝ առաջին շարքը «Հայաստանի Դրականութեան Մատնաշա-